ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 1-ին, հինգշաբթի.- Սրբոյն Եղիսէի մարգարէին:

Այսօր, երեկոյան, Մայր Աթոռի միաբան սարկավագները հանգստյան սենյակում հանդիպում ունեցան Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Բեզջյանի և Գերմանիայի Այիշթեթ քաղաքի Աստվածաբանական համալսարանի ռեկտոր դոկտոր Անդրեաս Թիերմեյերի հետ: Սրբազան Հայրը ներկայացրեց գերմանական Աստվածաբանական համալսարանը և անդրադարձավ նրա առաքելությանը՝ նշելով, որ այն բարձրագույն կրթություն ստանալու մեծ հնարավորություն է ընձեռում իրենց ուսումը շարունակել ցանկացող հոգևորականներին: Այնուհետև խոսքը տրամադրվեց համալսարանի ռեկտոր Անդրեաս Թիերմեյերին, որն առավել հանգամանալից կերպով խոսեց համալսարանի նշանակության և այնտեղ կրթություն ստանալու մասին:

Հանդիպմանը ներկա էին նաև Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Տ. Սրսեն արքեպս. Բերբերյանը, Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը և Տ. Սերովբե վրդ. Իսահակյանը:

Հուլիսի 2-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հուղարկավորության արարողությանը մասնակցելու նպատակով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը՝ Սնան արքեպս. Ղարիբյանի ուղեկցությամբ, և Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը՝ Շահան արքեպս. Սվաճյանի ուղեկցությամբ:

Նույն օրը, Վեհափառ Հայրապետի մահվան կապակցությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Հայաստանի Երրորդ Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահ Բաբկեն Արարքցյանը:

Հուլիսի 3-ին, շաբաթ.- Սրբոց երկոտասան առաքելոցն Քրիստոսի և Պողոսի Պօղոսի երեցփոխասաներորդ առաքելոյն:

Այսօր Վեհարանում տեղի ունեցավ մամլո ասուլիս, որին մասնակցում էին Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Շահե արքեպս. Աճեմյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Ընդմիջումից հետո լրագրողների հետ հանդիպեցին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը և Տ. Ռսկան արքեպս. Գալփաքյանը: Գարեգին արքեպս. Ներսիսյանը նշեց, որ հաջորդ օրը Կաթողիկոսական Տեղապահի ընտրությունն է տեղի ունենալու:

Հուլիսի 4-ին, կիրակի.- Զ. կիրակի զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շահան արքեպս. Սվաճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Անտուած զօրութեանց, դարձ հայեաց յերկնից և տես, այց արա այգւոյս այսմիկ և դարման տար սմա զոր տնկեաց աջ քո» (Սղմ. ՀԹ 15-16) բնաբանով:

Նույն օրը, երեկոյան, Կաթողիկոսական Տեղապահ ընտրելու նպատակով Վեհարանում Գերագույն Հոգևոր Խորհրդի և Եպիսկոպասաց համարեղ ժողով գումարվեց: Փակ գաղտնի քվեարկությունից հետո Կաթողիկոսական Տեղապահ ընտրվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հուլիսի 5-ին, երկուշաբթի.- Ա. օր Վարդավառի պահոց:

Այսօր, առավոտյան ժամը 7.00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին բերվեց Գարեգին Ա Համազգային Հայրապետի մարմինը, որը դրվեց Վեհարանի սրահում: Հարազատների հրաժեշտից հետո Տան Կարգ կատարվեց, որից հետո հոգևորականների ուղեկցությամբ համազգային Հայրապետի դին տարվեց Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի, որպեսզի համայն սգակիր ժողովուրդը կարողանա իր վերջին հրաժեշտը տալ Վեհափառ Հայրապետին:

Նույն օրը, երեկոյան, Ս. Սարգիս եկեղեցում հոգեհանգստյան արարողություն կատարվեց, որին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահը, Պատրիարք Սրբազան Հայրերը, այլ բարձաստիճան հոգևորականներ, Վեհափառ Հայրապետի ազգականները և հավաքացյալ ժողովուրդը:

Նույն օրը Վեհարանում մամլո ասուլիս հրավիրվեց, որին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և Եկեղեցական համաժողովի լրատվության հարցերի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական պատվիրակությունը՝ Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի գլխավորությամբ:

Հուլիսի 6-ին, երեքշաբթի.- Բ. օր Վարդավառի պահոց:

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին բերվեց Հանգուցյալ Հայրապետի մարմինը: Համապատասխան հոգեհանգստյան արարողություն կատարելուց հետո՝ այն դրվեց Մայր Տաճարի գավթում, որպեսզի սգակիր ժողովուրդն իր վերջին հրաժեշտը տա Վեհափառ Հայրապետին:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, հոգեհանգստյան արարողություն կատարվեց՝ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գեորգ արքեպս. Մերայդարյանի հանդիսադրությամբ:

Հուլիսի 7-ին, չորեքշաբթի.- Գ. օր Վարդավառի պահոց:

Այսօր, առավոտյան, Մայր Տաճարում հոգեհանգստյան պաշտոն կատարվեց, որի հանդիսադիրն էր Տ. Շահան արքեպս. Սվաճյանը:

Հոգեհանգստյան արարողություններ կատարվեցին նաև ժամը 12.00-ին և երեկոյան ժամերգությունից հետո՝ Տ. Գարեգին արքեպս. Բեզջյանի և Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի հանդիսադրությամբ:

Նույն օրը Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ, որի ժամանակ միաբաններն իրենց շնորհավորանքներն ուղղեցին Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին՝ Կաթողիկոսական Տեղապահ ընտրվելու առիթով: Այնուհետև Սրբազան Հայրը միաբաններին ներկայացրեց Հանգուցյալ Հայրապետի հուղարկավորության հետ կապված առաջիկա ծրագիրը:

Հուլիսի 8-ին, հինգշաբթի.- Դ. օր Վարդավառի պահոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, ապա կատարվեցին Հանգուցյալ Հայրապետի վերջին օծման և հուղարկավորության արարողությունները:

Հուլիսի 9-ին, ուրբաթ.- Ե. օր Վարդավառի պահոց:

Այսօր, կեսօրին, համաձայն Հայ Եկեղեցու «Մաշտոց» ծիսարանի արարողակարգի, Հանգուցյալ Հայրապետի շիրիմի վրա Այգուցի արարողություն կատարվեց՝ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի հանդիսադրությամբ (նշենք, որ այն կատարվում է մինչև յոթնօրեքը):

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ, Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ներկայությամբ, իր

աշխատանքները սկսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը, որի ընթացքում քննարկվեցին Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսի ընտրություններին վերաբերող հարցեր: Նիստը իր աշխատանքները շարունակեց մինչև հուլիսի 12-ը:

Նույն օրը, երեկոյան, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պողոսայանի նախագահությամբ, Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ատենապետությամբ, Եպիսկոպոսաց ժողովի հերթական նիստ գումարվեց:

Հուլիսի 11-ին, կիրակի.- ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Սվաղ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաթև արքեպս. Ղարիբյանը: «Հայր մեր»-ից առաջ հավատի պատշաճի բովանդակալից քարոզ խոսեց Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

Ս Պատարագին ներկա էին նաև Կաթողիկոսական Տեղապահը, այլ բարձրաստիճան հոգևորականներ և հյուրեր:

Հուլիսի 12-ին, երկուշաբթի.- Բ. օր Վարդավառի: Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Սվաղ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ արքեպս Մնացականյանը: Պատարագի ավարտին հոգեհանգստյան արարողություն կատարվեց՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

Հուլիսի 13-ին, երեքշաբթի.- Գ. օր Վարդավառի:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մեկնեց Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

Հուլիսի 14-ին, չորեքշաբթի.- Պսիք:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրիմի առջև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պողոսայանի հանդիսադրությամբ, յոթնօրեքի հոգեհանգստյան պաշտոն կատարեց:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ:

Արարողության ավարտին, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու կարգի համաձայն, Ս. Խաչով կնքվեց Վեհափառ Հայրապետի գերեզմանը:

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ, որին Տեղապահ Սրբազան Հայրը միաբաններին ծանուցեց կաթողիկոսական ընտրությունների մոտավոր ամսաթիվը՝ նշելով, որ մինչև 2000 թ. Հայաստանյայց Ս. Եկեղեցին կունենա իր 132-րդ Կաթողիկոսը:

Հուլիսի 15-ին, հինգշաբթի.- Սրբոյն Եսայեայ մարգարէին:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մեկնեց Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մուրադյանը:

Հուլիսի 17-ին, շաբաթ.- Սրբոցն Թադէոսի առաքելոյն մերոյ և Սանդիպտոյ կուսին:

Այսօր Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հրամանով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն նշանակվեց Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

Հուլիսի 18-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Սվազ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Բազրատ արքեպս. Գալստյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Զի ի նմանէ դոսք էք ի Քրիստոս Յիսուս. որ եղեւ մեզ իմաստութիւն յԱստուծոյ՝ արդարութիւն և սրբութիւն և փրկութիւն» (Ա Կորնթ. Ա 30) բնաբանով:

Պատարագին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, այլ բարձրաստիճան հոգևորականներ և հյուրեր:

Հուլիսի 21-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր, երեկոյան, Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ, որի ժամանակ Տեղապահ Սրբազան Հայրը միաբանների ուշադրությանը ներկայացրեց իր մտորումները՝ կապված հանգուցյալ Հայրապետի քառասունքի օրը կատարվելիք ծիսակատարության հետ: Այնուհետև հիշեցրեց, որ հաջորդ օրը Վեհափառի մահվան 15-րդ օրն է և պետք է հոգեհանգստյան արարողություն կատարվի հանգուցյալ Հայրապետի շիրիմի մոտ:

Հուլիսի 22-ին, հինգշաբթի.- Սրբոց նախահարցն՝ Ադամայ, Աբելի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ, Յովսեփայ, Մովսիսի, Սիսրոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամփսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեդէոնի և այլոց սրբոց նախահարցն:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի թաղման 15-րդ օրվա առիթով, նրա շիրիմի առջև հոգեհանգստյան մասնավոր պաշտոն կատարվեց՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսապետությամբ, ըստ Հայ Եկեղեցու «Մաշտոց» ծիսարանի:

Արարողության ավարտին Տեղապահ Սրբազան Հայրը մեկ անգամ ևս Ս. Խաչով կնքեց Վեհափառ Հայրապետի գերեզմանը:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հայրերը և բազմաթիվ հավատացյալներ:

Հուլիսի 23-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովության նախարար Ռազմիկ Մարտիրոսյանը, որին ընդունեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց հանրապետությունում առկա սոցիալական խնդիրների շուրջ:

Հուլիսի 25-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Սվագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր եպս. Փանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Խաղաղութեամբ քով Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացոյ զմեզ եւ անարկիւղ պահեա յամենայն չարէ» (Պատարագամատոյց) բնաբանով:

Հուլիսի 27-ին, երեքշաբթի.- Սրբոց երկոտասան մարգարէիցն՝ Ովսեայ, Ամոսայ, Միքիայ, Յովելեայ, Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յոնանու, Սոփոնեայ, Անգեայ, Զաքարեայ և Մաղաքեայ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ՀՀ կրոնի գործերի պետական հիմնադրամի ժամանակավոր պաշտոնակատար Լևոն Մկրտչյանը, որին հյուրընկալեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ամենապատիվ Սրբազան Հայրը և պարոն Մկրտչյանը փոխադարձաբար միմյանց շնորհավորեցին՝ Կաթողիկոսական Տեղապահ ընտրվելու և նոր պաշտոնի նշանակվելու առիթներով:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ներկայիս խնդիրներին առնչվող հարցերի շուրջ:

Նույն օրը, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի օրհնությունը ստանալու նպատակով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով կազմակերպված Գանձասար - Խոր Վիրապ - Ս. Էջմիածին ուխտագնացության մասնակիցները՝ 1700-ամյակի գրասենյակի վարիչ-տնօրեն Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի առաջնորդությամբ:

Քոլոր 40 ուխտավորները, Տեղապահ Սրբազան Հոր օրհնությունը ստանալուց և Մայր Տաճարում Իջման Ս. Սեղանի առջև Ս. Խաչը ծնրադիր համբուրելուց հետո, ուղևորվեցին դեպի Գանձասար:

Հուլիսի 28-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր, երեկոյան, Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ, որի ընթացքում Տեղապահ Սրբազան Հայրը խոսեց ներքին թեմերի քահանաների հավաքի մասին՝ այն բնորոշելով որպես կարևոր իրադարձություն Հայ Եկեղեցու կյանքում:

Հուլիսի 29-ին, հինգշաբթի.- Սրբոցն Սոփիայ և երից դստերացն՝ Պիստոսի, Էլպիսի և Ազապեայ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ներքին թեմերի հոգևորականների մեկօրյա նիստ գումարվեց՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պողոսպայանի նախագահությամբ:

Առավոտյան, նիստը սկսելուց առաջ, Մայր Աթոռ ժամանած հոգևոր Հայրերը, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պողոսպայանի հանդիսադրությամբ, հոգեհանգիստ կատարեցին նորոգ հանգուցյալ Հայրապետի շիրիմի վրա:

Նիստի նպատակն էր՝ ներկայացնել քահանայության առջև դրված ներկա առաքելության հրամայականը, անդրադառնալ դրանց լուծման եղանակներին, ինչպես նաև ծանոթանալ քահանայությանը մտահոգող խնդիրներին ու հիմնահարցերին և լուծում տալ դրանց:

Նիստը բացեց և «Հովիւն քաջ» սուրբ գրական բնաբանի վերլուծությամբ հանդես եկավ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, որից հետո ողջույնի խոսք ասաց Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը: Այնուհետև զեկուցում-ելույթներով հանդես եկան Տ. Արտակ ավագ քհն. Սիմոնյանը՝ «Հայ քահանան և նրա պարտականությունը որպես դաստիարակ Եկեղեցու խորհուրդների կատարելու ընթացքում», և Տ. Մեսրոպ քհն. Արամյանը՝ «Հայ քահանան և մեր Եկեղեցու հոգևոր ժառանգության և Ս. Գրքի հետ նրա առնչությունը» թեմաներով: Վերջում, քահանաների հարց ու պատասխան փոխանակելուց հետո, նիստն ամփոփեց ու փակման խոսքով հանդես եկավ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պողոսպայանը:

Նիստին ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, ներքին թեմերի առաջնորդ Սրբազանները և Հայաստանի քահանա Հայրերը:

Օգոստոսի 1-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: «Հայր մեր»- ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Այլ Աստուծոյ շնորհքն ... եւ զհոտ զիտութեանն իւրոյ յայտնի առնէ մեզ յամենայն տեղիս. զի հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած» (Բ Կորնթ. Բ 14-15) բնաբանով:

Պատարագին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պողոսպայանը, Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը, Տ. Տաթև արքեպս. Սարգիսյանը, միաբան հայրեր և հյուրեր:

Օգոստոսի 4-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր, երևկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հավաք:

Օգոստոսի 8-ին, կիրակի.- Ե. կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, երջանկահիշատակ Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան քառասունքի առիթով, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Հայրապետի սուրբ և անբիծ և ընտրեալ յորովայնէ» (Շարական) բնաբանով: Ս. Պատարագի ավարտին, Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսադրությամբ և թեմական առաջնորդների ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ընթերակայությամբ, հոգեհանգստյան մասնավոր պաշտոն կատարվեց Վեհափառ Հայրապետի շիրիմի առջև:

Սրբազան արարողությանը ներկա էին Վեհափառ Հայրապետի ազգականները, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ, ՀՀ կառավարության անդամներ և բազմաթիվ հավատացյալներ:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Իտալիայի դրանսպորտի նախարար Տեցիանո Տրեռի գլխավորած պատվիրակությունը և Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի դեսպան Ջանկարլո Արագոնան՝ ՀՀ դրանսպորտի փոխնախարար Աշոտ Գրիգորյանի և Իտալիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարիմատար Գագիկ Բաղդասարյանի ուղեկցությամբ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Գերաշնորհ Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

Օգոստոսի 9-ին, երկուշաբթի.- Ա. օր Աստուածածնի պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Սամարայի նահանգապետ Կոնստանտին Տիտովը և նրա գլխավորած պատվիրակությունը: Հանդիպման ընթացքում նահանգապետը խոսեց Սամարայում բնակվող ավելի քան 60 հազար հայ բնակչության մասին, որոնց ջանքերով անցած տարի Սամարայում հայկական եկեղեցու շինարարության հիմքն է դրվել:

Հանդիպմանը ներկա էին Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը և Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը:

Օգոստոսի 11-ին, չորեքշաբթի.- Գ. օր Աստուածածնի պահոց:

Այսօր Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելած Մշակութային խորհրդարանի մի խումբ անդամների՝ կազմակերպության նախագահ Արնշատ Ավագյանի գլխավորությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանի մտավորականության ներկայիս խնդիրների և նրանց հուզող հարցերի շուրջ:

Հյուրերն իրենց մտահոգությունն արտահայտեցին Հայաստանում տարածված աղանդների և նրանց ապազգային գործունեության վերաբերյալ, հայտնեցին կազմակերպության պատրաստակամությունը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն զորավիգ լինելու հարցում:

Զրույցի ընթացքում հյուրերը հետաքրքրվեցին նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջիկա ընտրությանը վերաբերող կազմակերպչական մի շարք հարցերով:

Հանդիպմանը ներկա էին Գերաշնորհ Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը և Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով կոնգրեսական խմբի անդամներին: Հյուրերին ուղեկցում էր Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնը:

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ, որին Տեղապահ Սրբազան Հոր կողմից սարկավագների համապատասխան բաշխումներ կատարվեց՝ կիրակի օրը կատարվելիք խաղողի և մատաղի օրհնությունը կազմակերպված անցկացնելու նպատակով:

Օգոստոսի 15-ին, կիրակի.- ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»- ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը տոնի խորհուրդը մեկնող քարոզ խոսեց՝ «Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ, յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անսպառ յուրախութիւն տրտմեցելոցն ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան...» (Շարական) բնաբանով:

Տեղապահ Սրբազանը Վերափոխման տոնին շաղկապեց նաև Մայր Տաճարի Շողակաթի տոնը: Ինչպես հայտնի է Ս. Էջմիածնի դարավոր տաճարը ևս կոչվում է Ս. Աստվածածնի անունով, և Վերափոխման մեծ տոնի նախօրեին, շաբաթ օրը, նշվում է այս տոնը՝ իբրև Մայր Տաճարի նավակատիքի տարեդարձի օր:

Զույգ տոնները միահյուսելով մեկ ընդհանուր գաղափարի՝ մայրության գաղափարի շուրջ, Տեղապահ Սրբազանն ասաց. «Բոլորովին էլ պատահականություն չէ, որ Շողակաթի տոնը նախորդում է Աստվածածնի Վերափոխման տոնին: Երանաշնորհ մեր Հայրապետները իմաստուն մի դասավորությամբ են այս զույգ տոները զետեղել կողք-կողքի՝ հատուկ նպատակով»:

Սրբազան արարողության ավարտին Տեղապահ Սրբազանը նախագահեց նաև խաղողօրհնեքի արարողակարգը, որից հետո օրհնված պտուղը բաշխվեց Ս. Պատարագին ներկա բազմաթիվ հավատացյալների:

Տոնի առիթով և ի հիշատակ հանգուցյալ Հայրապետի, Մայր Տաճարում նաև մատաղօրհնեք կատարվեց և հավատացյալ ժողովրդին բաժանվեց:

Օգոստոսի 16-ին, երկուշաբթի.- Բ. օր Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գրիգորյանը:

Ս Պատարագի ավարտին հոգեհանգստյան կարգ կատարվեց՝ «վասն հանգուրէն ննջեցելոց»:

Օգոստոսի 22-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Սվագ Ս. Սեղանի վրա. Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Ապաքէն դուք տեսանար Աստուծոյ կենդանւոյ էք, որպէս ասաց Աստուած» (Բ Կորնթ. Զ 16) բնաբանով:

Օգոստոսի 24-ին, երեքշաբթի.- Սրբոցն Յովակիմայ և Աննայի՝ ծնողաց Ս. Աստուածածնի և Կանանցն Իւղաբերից:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

Օգոստոսի 25-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հավաք:

Օգոստոսի 29-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Վերափոխման: Տօն գիւղի գօղուոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Սվագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նազարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Անկանիմք առաջի Քո Աստուածածին և աղաչեմք զանարատ կոյսդ, բարեխօսեա վասն անձանց մերոց, և աղաչեա զՄիածին Որդիդ՝ փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց» (Հովհ. Մանդակունի) բնաբանով:

Սեպտեմբերի 1-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պողոսյանն ընդունեց Շվեյցարիայից Հայաստան ժամանած «Անդրե» ընկերության պատվիրակությանը՝ նախագահ պարոն Ռայման Կրեպֆենի գլխավորությամբ և Հայաստանի գծով խորհրդատու պարոն Արգար Մեսրոպյանի ուղեկցությամբ:

Խումբը Հայաստանում հիմնել է գյուղատնտեսական մթերքների վերամշակման և պահածոյացման մի քանի գործարաններ:

Ողջունելով հյուրերին, հանդիպման ընթացքում Տեղապահ Սրբազան Հայրը նրանց ծանոթացրեց Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադրման պատմությանը, խոսեց հայ ժողովրդի կյանքում Եկեղեցու կատարած կարևոր դերի մասին: Սրբազան Հայրը խրախուսեց և գնահատեց հակառակ մեր երկրի ներկա տնտեսական դժվարություններին շվեյցարացի ձեռնարկատերերի ծավալած գործունեությունը Հայաստանում:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, պարոն Ռայման Կրեպֆենին իր հերթին նույնպես կարևորեց Հայ Եկեղեցու դերը և կատարած առաքելությունը հայ ժողովրդի գոյատևման գործում:

Հանդիպման ավարտին հյուրերը շրջեցին Մայր Աթոռի թանգարաններում և ծանոթացան հայ եկեղեցական արվեստի մեծարժեք գործերին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը և տնտեսական բաժնի վարիչ պարոն Ներսես Կարամանուկյանը:

Սեպտեմբերի 2-ին, հինգշաբթի.- Սրբոցն Յովհաննու Կարապետին և Յոբայ արդարոյն:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ՄԱԿ-ի Փախստականների գծով Գերագույն հանձնակատար Սադակո Օգատային և նրա գլխավորած պատվիրակությունը:

Սեպտեմբերի 5-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ արեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «/Գոհութիւն Աստուծոյ/, զի զհոգ զիպութեանն իւրոյ յայտնի առնէ մեզ յամենայն տեղիս» (Բ Կորնթ. Բ 14) բնաբանով:

Պատարագին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Տ. Հակոբ եպս. Գրիգորյանը և այլ միաբան հայրեր:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ԱՄՆ կոնգրեսական Ջեյմս Ռոզանը՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի օրհնությունն ստանալու նպատակով: Մեծարգո հյուրին ընկերակցում էին ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգի խորհրդարանի անդամ Հովարդ Քալուգյանը, Ամերիկայի Հայկական Համագումարի Լոս Անջելեսի և Երևանի գրասենյակների տնօրեններ Պիտեր Աբաջյանը և Արփի Վարդանյանը:

Սեպտեմբերի 7-ին, չորեքշաբթի.- Բ. օր խաչի պահոց:

Այսօր Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց Թուրքիայից Հայաստան ժամանած թուրք գործարարների պատվիրակությունը՝ Ղարսի Առևտրատնտեսական պալատի նախագահ Մեհմետ Ցլմազի գլխավորությամբ:

Ողջունելով պատվիրակության անդամներին, Ամենապատիվ Սրբազանն իր ցավակցությունը հայտնեց Թուրքիայում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի առիթով: Իրենց հերթին հյուրերը ցավակցություն հայտնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան կապակցությամբ:

Տեղապահ Սրբազանը ողջունեց հայ և թուրք գործարարների փոխհամագործակցությունը և հույս հայտնեց, որ այն կնպաստի երկու հարևան երկրների տնտեսական բարգավաճմանը:

Ինչպես Տեղապահ Սրբազանին տեղեկացրեցին հյուրերը, ընդառաջելով Շիրակի մարզպետարանի նախաձեռնությանը, եկող տարի քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով 50 հայաստանցիներից բաղկացած մի արշավախմբի հնարավորություն կտրվի բարձրանալ Արարատ լեռը:

Հանդիպմանը ներկա էին Տ. Գրիգորիս արքեպ. Բունիաթյանը և Տ. Հակոբ եպս. Գրլենյանը:

Սեպտեմբերի 8-ին, հինգշաբթի.- Գ. օր Խաչի պահոց: Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱնապէ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության պատվիրակությունը՝ նախարարի խորհրդական, հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Միշել Ֆուշեի գլխավորությամբ: Պատվիրակությանն ընկերակցում էր Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրանը:

Սեպտեմբերի 12-ին, կիրակի.- ԽԱՉՎԵՐԱՑ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպ. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Եւ սոփաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն» (Շարական) բնաբանով:

Սեպտեմբերի 13-ին, երկուշաբթի.- Տօն է Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խորեն արքեպ Հովհաննիսյանը:

Ս. Պատարագի ավարտին հոգեհանգստյան կարգ կատարվեց՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

Սեպտեմբերի 14-ին, երեքշաբթի.- Տօն է Եկեղեցւոյ:

Այսօր Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելած Հունգարիայի Ազգային փոքրամասնությունների պետական խորհրդի նախագահ Ֆոշո Դոնչին և Հունգարիայի Հայ Ազգային ինքնավարության մի խումբ անդամների՝ նախագահ Ալեքսան Ավանեսյանի գլխավորությամբ:

Հանդիպման ընթացքում հյուրերը Տեղապահ Սրբազանին ներկայացրին հունգարահայ բնակչության ներկայիս վիճակը և գաղութի վերակազմակերպման հետ կապված իրենց ծրագրերը՝ խնդրելով Ս. Էջմիածնի հովանավորությունն ու աջակցությունը:

Տեղապահ Սրբազանը քաջալերելով նրանց առաջարկները, իր պատրաստակամությունը հայտնեց նպաստել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ գաղութի կապերի սերտացմանը և աջակցել հունգարահայ համայնքի ներսում կրոնա-բարոյական և հոգևոր-մշակութային կյանքի զարգացմանը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը և Ուրուգվայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հակոբ եպս. Գրլենյանը:

Նույն օրը, Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունը ավարտելով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Եգիպտոսի Արաբական

Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Իման Սաիդը՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին հրաժեշտ տալու համար:

Դեսպանը նշեց, որ Հայաստանից իր հետ տանում է անջնջելի տպավորություններ հայ ժողովրդի և հայ մշակույթի մասին: Կարևորելով կրոնի դերը ժողովուրդների կյանքում, դեսպանն իր հիացմունքն արտահայտեց հայ ժողովրդի քրիստոնեական անսասան հավատքի վերաբերյալ, որ պահպանում է հայ ժողովուրդը 1700 տարիներից ի վեր՝ հակառակ պատմության անբարենպաստ պայմաններին: Այս առիթով պրն. Իման Սաիդը ցանկություն հայտնեց կրկին լինել Հայաստանում և ներկա գտնվել Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանական հանդիսություններին:

Տեղապահ Սրբազանը հրաժեշտ տալով հյուրին, վերջինիս մաղթեց նորանոր հաջողություններ դիվանագիտական հետագա գործունեության ճանապարհին:

Հանդիպմանը ներկա էին Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը և Տ. Հակոբ եպս. Գրիգոյանը:

Նույն օրը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ, տեղի ունեցավ 1999-2000 թթ. ուսումնական տարվա բացման հանդիսավոր արարողությունը:

Սեպտեմբերի 15-ին, չորեքշաբթի.- Պահք: Տօն է Եկեղեցւոյ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին սեպտեմբերի 16-17-ը Երևանում կայանալիք «Ֆրանց Վերֆելը և հայ ժողովուրդը» միջազգային գիտաժողովի մասնակից ավստրիացի հյուրերը՝ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Լավրենտի Բարսեղյանի ուղեկցությամբ: Այցելուների թվում էին Ավստրիայում «Ֆրանց Վերֆել» կոմիտեի անդամ մի խումբ գիտնականներ, ինչպես նաև Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գրքի թուրքերեն թարգմանության հրատարակիչ Ռագըպ Զարաքոյուն:

Նույն օրը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում դասախոսությամբ հանդես եկավ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը:

Դասախոսությունը նվիրված էր քրիստոսաբանությանը և Քրիստոսի անձին, պարզաբանվեց նաև երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի՝ հոմում ստորագրած գրությունը: Դասախոսության ավարտին Սրբազան Հայրը պատասխանեց հավաքվածների հարցերին:

Նույն օրը Գևորգյան Հոգևոր Ճեմարան այցելեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Սրբազան Հայրը նախ շնորհավորեց Ճեմարանի տնօրենությանն ու

ուսանողությանը նոր ուսումնական տարեշրջանի բացման առիթով և ապա ներկայացրեց իր պատրաստությունները քսաներորդ դարի հոգևորականի կերպարի վերաբերյալ:

Սեպտեմբերի 16-ին, հինգշաբթի.- Տօն է Եկեղեցւոյ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ԵՄԿ գործող նախագահ, Նորվեգիայի արտգործնախարար Կնուտ Վոլեբեկը և նրա գլխավորած ԵՄԿ պատվիրակությունը:

Նույն օրը Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապայանն ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելած Թեհրանի Հայ Կանանց Եկեղեցասեր Միության նախաձեռնությամբ Հայաստան ժամանած իրանահայ ուխտավորներին:

Տեղապահ Սրբազանը ողջունելով հյուրերին, համառոտ ներկայացրեց Ս. Էջմիածնի 1700-ամյա պատմությունը: Ապա Ամենապատիվ Սրբազանն իր օրհնությունը տվեց ուխտագնացներին, միաժամանակ քաջալերելով Եկեղեցասեր Միության նախաձեռնությունը:

Ինչպես հայտնեց միության նախագահ Նվարդ Մաղաթյանը, սա իրանահայ ուխտագնացների երրորդ խումբն է, որ միության նախաձեռնությամբ ուխտի է գալիս Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին: Տիկին Մաղաթյանը տեղեկացրեց, որ այս անգամ իրենց հետ բերել են 200 կտոր հոգևոր գրականություն, որոնք տրվել են հանրակրթական դպրոցներին:

Հանդիպմանը ներկա էր Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

Սեպտեմբերի 17-ին, ուրբաթ.- Պահք: Տօն է Խաչի:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր աշխատանքն սկսեց քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի գործադիր մարմնի լիազումար նիստը:

Հանձնաժողովն իր աշխատանքներն ավարտելու է սեպտեմբերի 18-ին: Երկօրյա նիստերի ընթացքում ժողովականները կքննարկեն 1700-ամյակի հետագա ծրագրերին վերաբերող հարցեր, որոնց թվում՝ Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարի, եկեղեցիների և վանքերի կառուցմանն ու վերակառուցմանը, ուխտագնացությունների, 1700-ամյակի առիթով Պետերբուրգում, Վիեննայում, Լոնդոնում և արտերկրի այլ քաղաքներում նախատեսվող ցուցահանդեսների կազմակերպմանն առնչվող հարցեր:

Սեպտեմբերի 19-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Սվագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց զպատուիրանն զայն» (Մարկ. Ժ 5) բնաբանով:

Սեպտեմբերի 20-ին, երկուշաբթի.- Պահք: Սրբոցն Մամասայ, Փիլիկտիմոնի և Միմէոնի Միւնսակեցւոյն:

Այսօր Մայր Աթոռ Ս Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ատենապետությամբ. գումարվեց Գերագույն Հոգևոր խորհրդի և եպիսկոպոսաց դասի համատեղ խորհրդակցական ժողով:

Սեպտեմբերի 24-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր, առավոտյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մեկնեց Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Սրբոյ Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց նորոգ ձեռնադրյալ Տ. Ղևոնդ աբեղա Ղևոնդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Եկայք հաւատացեալք՝ երկրպագեսցուք աստուածային սուրբ նշանիս» (Շարական) բնաբանով:

Նույն օրը, Արցախի թեմի վերահաստատման տասնամյա հոբելյանին մասնակցելու նպատակով, Արցախ մեկնեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Նույն օրը, գիշերը, հրաժեշտ տալով Մայր Աթոռի միաբանությանը, Ս Էջմիածնից մեկնեց Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսը:

Նույն օրը Գևորգյան Հոգևոր Ճեմարան այցելեց Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Բեքչյանը: Ճեմարանում ուսանողության հետ հանդիպման ընթացքում տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը ներկայացրեց Սրբազան Հոր կենսագրությունն ու այցի նպատակը:

Այնուհետև Սրբազան Հայրը խոսեց միջեկեղեցական հարաբերությունների, գերմանահայոց թեմում տեղի ունեցող նորությունների, մասնավորապես՝ Արմաշի նորաբաց ընծայարանի մասին:

Սեպտեմբերի 27-ին, երկուշաբթի.- Սրբոյն Դաւթի Դւնեցւոյն և սրբոց վկայիցն՝ Ղամբէոսի և Ղամբէուխոյն:

Այսօր Արցախից վերադարձավ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Սեպտեմբերի 29-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր աշխատանքն սկսեց Հայաստանում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Կլոր սեղան» գրասենյակի տարեկան խորհրդաժողովը: Այն իր աշխատանքները շարունակելու է ևս երկու օր: